2. Վասն Խալդեայ զպարիսպ նորոգեցին զԽալդեայ շնորհալի ղաւակաց։

3. Իսրուխնիս որդի Սարդուրեայ, արքայ հզօր, արքայ բազմութեանց, արքայ աշխարհին Բիայնացւոց (Վանեցւո՛ց), բնակեալ ի քաղաքին Դուսպայ (Տոսպայ)։

4. (*)

5. Զզոհս... զեզինս... աստուծոյն Խալդեայ...

.... մեռելոց։

Ի հարկէ Ձեզ յայտնի է որ Հայաստանի նախկին բընակչաց վեհագոյն աստուածը Խալդի կ'անուանէր, որոյ անունը անպակաս պատահում է Վանի բոլոր արձանագրութեանց մէջ։

Յուսամ և սպասեմ որ ձեռք կ'բերէք էլի նմանօրինակ արձանագրութիւնք և կհաղորդէք ինձ։

Խորին յարգանօք մնամ
Ձեզ միշտ պատուող
Ք. Պատկանեան

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՄԻ ՆԱՄԱԿ

Բարձրապատիւ Հայր
Եփրեմ Աստուածարեալ վարդապետ
Ալթունեանց

Ողորմած Տէր

Ինչ ո՛չ երկմտիմ թէ եթէ 'ի խնդրել փութացայց 'ի բարձրապատուութենէ ձերմէ զայն առ որ մշտապատրաստ հանդիսացուցեալ էք զձեզ (այս է 'ի ձեռնտուութիւն ազգայնոց) չունիք երբէք խնայել զձերովսանն պարտուպատշաճ ներգործութիւն։

Աշակերտ Լազարեան լսարանի Ռափայէլ Պատկանեան որդի Արժանապատիւ Գաբրիէլ քահանայի Պատկանեանին որ գտանի այժր նպատակաւ մտանելոյ յակադէմիայն ըստ ժամուն սադրելոյ պարտաւորեալ գտանի մտանել իւր 'ի թիւս օրինաւոր աշակերտաց բարձրագոյն ուսումնարանին լինել գրագիր 'ի հոգևոր կառավարութեան տեղւոյդ առ 'ի

նովաւ ապահովել զմնունդ իւր յայդմիկ պանդխտութեան զորմէ ունի խնդրել 'ի նոյն հոգևոր Ատենէ կարգել զինքըն 'ի նոյն։

Առ այնպիսի նպատակ նորա որ թևակոխէ յապահովութիւն մնդեան պանդխտացելոյն ես իբրև եղբայր նորա հարազատ նոյն և որդի ծնողի նորա իմոյս երախտաւորի սովին դոյզն նամակագրութեամբ խնդրեմ 'ի բարձրապատուութենէ ձերմէ զի թէ՛ մարթ ինչ իցէ չխնայել զձեր ներգործութիւն առ այն նպատակ Պատկանեանին որով ունիք պարտաւորել զիս յանչափս։

Ցանձնարարեալ զիս 'ի շնորհս գերամաքուր աղօթից ձերոց Ամեն կատարեալ յարգանօք և խորին վերապատութեամբ

Ձերոյին Բարձրապատուութեան

Լիագութ Հայր,

Խոնարհ ծառայ Միքայէլ Նալբանդեանց

1851-ի 5 սեպտ.

'ի Սիմֆէրոպոլ

Հայր սուրբ։

Զոր սիրելի որդեակն իմ և եղբայր՝ Միքայէլ Ղազարեանն Նալբանդեանց՝ խնդրեալ է վասն որդւոյ իմոյ Ռափայէլի, զնոյն ու ես երկրորդեմ, այն է, առնուլ զինդիր նորա, զոր ունի մատուցանել 'ի կառավարութիւնդ որդի իմ, և փութացուցանել առ սրբազան Առաջնորդն 'ի պերէկոպ զՌիմու և այսու ունիք յոյժ ու յոյժ պարտաւորել զիս, և զՄիքայէլն և զորդին իմ իսկ, զոր ընկալեալ էք հայրաբար, և խնամեալ 'ի պանդխտութեան, զորմէ եմ գոհաբան և շնորհապարտ։

Ձերում Հայրութեան

1851. սեպ. 5. Խոնարհ ծառայ

Սիմֆերապոլ. Գաբրիէլ քահանայ Պատկանեանց